ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Բնապահպանության նախարարությունը ստորև ներկայացնում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար «Հանդերձանքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 25-ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-1» ծածկագրով պայմանագրում 2018 թվականի սեպտեմբերի 17-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Պայմանավորված բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պետական տեսուչի համազգեստի նկարագրում կատարվող փոփոխություններով:
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանավորված բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պետական տեսուչի համազգեստի նկարագրում կատարվող փոփոխություններով և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետով և հիմք ընդունելով բնապահպանության նախարարության և «Էլաամոդա» ՍՊԸ միջև 2018 թվականի մայիսի 25-ին կնքված Պայմանագրի 8.8 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ լուծվել է Պայմանագիրը:
Փոփոխության հիմնավորում՝	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետ, պայմանագրի 8.8 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **ՀՀ բնապահպանության նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«25» մայիսի 2018թ. թիվ ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-1 պայմանագրի

ք.Երևան «17» «09» 2018թ.

Բնապահպանության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հ.Հովհաննիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Էլաամոդա» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է.Հովսեփյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 25-ին կողմերի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-1» ծածկագրի պայմանագրի 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2018 թվականի մայիսի 25-ին կողմերի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/28-1» ծածկագրով պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծել:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Բնապահպանության նախարարություն	**«Էլաամոդա» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Դրոյի 8/4
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Յունիբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
ՀՀ 900011018679	ՀՀ 24105020675400
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00889965
Բնապահպանության նախարարության	«Էլաամոդա» ՍՊԸ-ի
գլխավոր քարտուղար	տնօրեն
Հ.Հովհաննիսյան	***Է.Հովսեփյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**